

ԳԼՈՒԽ II. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2008-2012 ԹԹ.....	2
2.1. կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ, համակարգված քաղաքականությունը	2
2.2. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ..	3
ծրագրի հիմնական սկզբունքներն, նպատակներն ու ակնկալվող արդյունքները.....	3
2.3. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2008-2012 թթ.....	6
միջոցառումների ծրագրի հիմնական (առաջնահերթ) ուղղություններն ու ..	6
խնդիրները	6
2.4. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմին կամ մարմիններ .	12

ԳԼՈՒԽ II. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2008-2012 ԹԹ.

2.1. կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ, համակարգված քաղաքականությունը

1. ՀՀ կառավարությունը Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովում է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության տարրերը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների 2008-2012թթ. ծրագրի արդյունքների և միջոցների **ամբողջականացնելու միջոցով**:
2. ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2008-2012թթ. շարունակելու է հետևողականորեն.
 - կիրառել կոռուպցիայի դեմ պայքարի **միջազգային գործիքները**, այդ թվում՝ ՄԱԿ-ի և ԵԽ կոնվենցիաները, գործընկերային գնահատման կառույցները, և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային լավագույն փորձը՝ դրանց վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով:
 - ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարում **հանրային աջակցություն**՝ քաղաքացիական հասարակության գործուն մասնակցության և հանրային քարոզչության միջոցով:
 - ապահովել ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության պարբերական **վերանայումն** ու **ճշգրտումը**, ինչպես նաև դրա **ներդաշնակությունը** այլ ոլորտներում և բնագավառներում վարվող պետական քաղաքականության գերակայություններին՝ ՀՌԻՄԾ միջոցառումների իրականացման և դրանց նախնական ու միջանկյալ արդյունքների շարունակական մոնիտորինգի, կանոնավոր գնահատման և քաղված դասերի ներառման միջոցով:
 - ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության իրականացման համար պատասխանատու **մարմինների** արդյունավետ և համակարգված գործունեությունը՝ այդ մարմինների գործառնությունների տարանջատման, մասնագիտական կարողությունների զարգացման, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանման և այդ մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման միջոցով:
 - համաչափորեն կիրառել հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական **միջոցները**՝ կոռուպցիայի կանխարգելումը, բացահայտումն ու պատասխանատվության ենթարկումը, հանրության կրթությունը և քարոզչությունը՝ օրենսդրության կատարելագործման և կոռուպցիայի հետագա քրեականացման, ինստիտուցիոնալ բարեփոխումների և իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով:

2.2. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հիմնական սկզբունքներն, նպատակներն ու ակնկալվող արդյունքները

3. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հիմնական քաղաքական ուղեցուցիչներն ու սահմանված թիրախները խարսխված են ՀՀ կառավարության ծրագրում և ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրում պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ստանձնած պարտավորությունների վրա:
4. Միաժամանակ, ՀՌԻՄԾ նպատակները և խնդիրները տարանջատված են ըստ ակնկալվող արդյունքների` **վերջնական (ազդեցություն), միջանկյալ և նախնական** մակարդակներում: Ընդ որում, յուրաքանչյուր մակարդակում ակնկալվող արդյունքներին ներկայացվող հիմնական պահանջներն են. դրանց շոշափելիությունը, իրատեսականությունը, չափելիությունը և համադրելիությունը:
5. ՀՌԻՄԾ իրականացումից ակնկալվող վերջնական և միջանկյալ արդյունքների 2012թ. թիրախները համապատասխանում են Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների (ԿԱԵ) խմբի պետական կառավարման արդյունավետության 2007թ. միջին ցուցանիշներին, որոնք ընդհանուր առմամբ գերազանցում են, թե՛ ԵԿԱ, թե՛ ՄՑԵ երկրների խմբի միջին ցուցանիշներին: Կառավարման արդյունավետության ոլորտում ԿԱԵ երկրների ընթացիկ միջին ցուցանիշները բնութագրական են առավելապես Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի համար: Հետևաբար, նշված երկրների ցուցանիշներն այս ոլորտում հիմնականում համընկում են Հայաստանի համար 2012թ. սահմանված թիրախներին:
6. **ՀՌԻՄԾ հիմնական նպատակը և ակնկալվող վերջնական արդյունքը Հայաստանում կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումն է:** Մասնավորապես, ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ ՀՌԻՄԾ իրականացման արդյունքում 2012թ. կվերանա կոռուպցիայի համակարգային բնույթը, նշանակալիորեն կսահմանափակվի դրա տարածվածության աստիճանը, կմեծանա քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակը, զգալիորեն կբարելավվի սոցիալական արդարության ընկալումը տնային տնտեսությունների և գործարարների շրջանում, կամրապնդվի երկրում քաղաքական համակարգի կայունությունը, նախապայմաններ կստեղծվեն տնտեսության արտադրողականության բարձրացման համար` մեծացնելով երկրի մրցունակությունը և տնտեսության գրավչությունը ներդրումների համար:
7. ՀՌԻՄԾ իրականացման վերջնական արդյունքները կգնահատվեն Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ) և Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ) ցուցիչներով:
8. ՀՌԻՄԾ իրականացման վերջնական արդյունքների 2012թ. թիրախները սահմանվում են.
 - Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ)` 4.1 միավոր (2007 թվականի 3.0-ի փոխարեն),
 - Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ)` -0.05 միավոր` (2007 թվականի -0.58-ի փոխարեն):
9. Ընթացիկ իրավիճակի և 2012թ. թիրախի միջև առկա խզումը ԿԸՀ և ԿՀՀ համաթիվերի համար կազմում է համապատասխանաբար 11.0% (1.1 միավոր 0-10 միջակայքում) և 10.6% (0.53 միավոր -2.5-2.5 միջակայքում) միջակայքային տոկոսային կետ:
10. ՀՌԻՄԾ **միջանկյալ արդյունքները** գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակների էական կրճատումն է:
11. Մասնավորապես, ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ 2012թ. **գործառնական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում կբարձրանա կառավարման արդյունավետությունը, կբարելավվեն կարգավորման որակն ու կառավարման գործառնականությունը և կբարձրանա տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը: Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատման ՀՌԻՄԾ միջանկյալ արդյունքի 2012թ. թիրախները սահմանվում են.
 - **Կառավարման արդյունավետության բարձրացում.** Կառավարման արդյունավետության համաթիվ (ՀԲԻ)` 0.15 միավոր (2007 թվականի -0.16-ի փոխարեն):
 - **Կարգավորման որակի և կառավարման գործառնականության բարելավում.** Կարգավորման որակի համաթիվ (ՀԲԻ)` 0.37 միավոր (2007 թվականի 0.26-ի փոխարեն):
12. Նախանշված թիրախների և առկա վիճակի միջև խզումը նշանակալի չէ և հիմնականում ենթադրում է նշված ուղղություններով ընթացիկ բարեփոխումների շարունակականության ապահովում:
13. ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ 2012թ. **վարչական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում էականորեն կբարձրանա օրենքի գերակայության ապահովման մակարդակը, կտրուկ կմեծանա դատական համակարգի անկախության աստիճանը, կբարձրանա պաշտոնի չարաշահումների հայտնաբերման և հետապնդման մակարդակը, էականորեն կբարձրանա կառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության մակարդակը, ինչպես նաև կամբողջականացվի

հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ համակարգը: Վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման ՀՌԻՄԾ միջանկյալ արդյունքի 2012թ. թիրախները սահմանվում են.

- **Օրենքի գերակայության ապահովման մակարդակի բարձրացում.** Օրենքի գերակայության համաթիվ (ՀԲԻ)՝ -0.15 միավոր (2007 թվականի -0.52-ի փոխարեն):
- **Կառավարման մարմինների գործունեության հաշվետվողականության, թափանցիկության և հրապարակայնության մակարդակի բարձրացում.** Ձայնի լսելիության և հաշվետվողականության համաթիվ (ՀԲԻ)՝ -0.47 միավոր (2007 թվականի -0.72-ի փոխարեն):

14. Վարչական կոռուպցիայի կրճատման նշված թիրախների և ընթացիկ վիճակի միջև առկա խզումն զգալի է և հիմնականում ենթադրում է նշված ուղղություններով արմատական քայլերի հետևողական իրականացում: Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախների համեմատ, վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախներն առավել հավակնոտ են:

15. ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ 2012թ. **քաղաքական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում կմեծանա քաղաքական կայունությունը, կբարձրանա քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, այդ թվում՝ քաղաքական բազմակարծության և մասնակցության, խոսքի և դավանանքի ազատության, միավորվելու, կազմակերպվելու աստիճանը, կկատարելագործվեն ընտրական գործընթացները, կմեծանա լրատվամիջոցների անկախության և կայունության աստիճանը, կհզորանա քաղաքացիական հասարակությունը և կընդլայնվի կառավարման գործընթացներին քաղաքացիական մասնակցությունը, էականորեն կբարելավվի շահերի խմբերի և շահերի բախումների կարգավորումը և կապահովվի արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը: Քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատման ՀՌԻՄԾ միջանկյալ արդյունքի 2012թ. թիրախները սահմանվում են.

- **Քաղաքական կայունության բարձրացում.** Քաղաքական կայունության համաթիվ (ՀԲԻ)՝ 0.23 միավոր (2007 թվականի -0.30-ի փոխարեն)
- **Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ապահովման մակարդակի բարձրացում և ընտրական գործընթացների կատարելագործում.** Քաղաքական իրավունքների համաթիվ/ԱԱ (ՖՀ)՝ 2 միավոր (2007 թվականի 5-ի փոխարեն), Քաղաքացիական ազատությունների համաթիվ/ԱԱ (ՖՀ)՝ 2 միավոր (2007 թվականի 4-ի փոխարեն):

16. **Քաղաքական կոռուպցիայի** մակարդակի կրճատման նշված թիրախների և ընթացիկ վիճակի միջև առկա խզումը էական է և ենթադրում է նշված ուղղություններով արմատական փոփոխությունների իրականացում՝ քաղաքացիական հասարակության կառույցների լայն ներգրավմամբ: Քաղաքացիական հասարակության զարգացման համեմատաբար դրական միտումները ամուրի հիմք են ծառայում կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև արդյունավետ համագործակցություն ծավալելու համար: Ընդ որում, թե՛ գործառնական, թե՛ վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախների համեմատ, քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախներն ամենահավակնոտ են, իսկ մարտահրավերների սպեկտրն առավել լայն է և ընդգրկում:

17. ՀՌԻՄԾ իրականացման միջանկյալ արդյունքների 2012թ. թիրախները, ըստ կոռուպցիայի տեսակների՝ գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակների գնահատման համար ընտրված ցուցիչների, ամփոփված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. ՀՌԻՄԾ իրականացման ակնկալվող արդյունքները, ընթացիկ և թիրախ ցուցիչները, թիրախային խզումը միջակայքերը, վերջնական և միջանկյալ արդյունքների մակարդակներում

ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՐԴՅՈՒՆՔ	ՑՈՒՑԻՉ	ԸՆԹԱՑԻԿ ՑՈՒՑԻՉ	ԹԻՐԱԽ	ԽՁՈՒՄ		ՄԻՋԱՎԱՅՔ
		ՀԱՄԱԹԻՎ/ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)	ՄԻԱՎՈՐ/ԿԱՐԳ (ՏԱՐԻ)	ՄԻԱՎՈՐ/ԿԱՐԳ (ՏԱՐԻ)	ՄԻԱՎՈՐ	% ԿԵՏ	ՑԱԾՐ - ԲԱՐՉՐ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ	Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատում	Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ)	3.0/99 (2007)	4.1 (2012)	1.1	11.0%	0÷10
		Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ)	-0.58/35 (2006)	-0.05 (2012)	0.53	10.6%	-2.5÷2.5
ՄԻՋԱՎԱՅՆ ԱՐԴՅՈՒՆՔ	Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատում	Կարգավորման որակ (ՀԲԻ)	0.26/59 (2006)	0.37 (2012)	0.11	2.2%	-2.5÷2.5
		Կառավարման արդյունավետություն (ՀԲԻ)	-0.16/51 (2006)	0.15 (2012)	0.31	6.2%	-2.5÷2.5
	Վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատում	Օրենքի գերակայություն (ՀԲԻ)	-0.52/38 (2006)	-0.15 (2012)	0.37	7.4%	-2.5÷2.5
		Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԻ)	-0.72/27 (2006)	0.47 (2012)	1.19	23.8%	-2.5÷2.5
	Քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատում	Քաղաքական կայունություն (ՀԲԻ)	-0.30/35 (2006)	0.23 (2012)	0.53	10.6%	-2.5÷2.5
		Քաղաքական իրավունքներ/ԱԱ (ՖՀ)	5 (2007)	2 (2012)	3	50.0%	7÷1
Քաղաքացիական ազատություններ/ԱԱ (ՖՀ)		4 (2007)	2 (2012)	2	33.3%	7÷1	

2.3. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2008-2012 թթ. միջոցառումների ծրագրի հիմնական (առաջնահերթ) ուղղություններն ու խնդիրները

18. ՀՌԻՄԾ իրականացման հիմնական խնդիրը **կոռուպցիայի կրճատման մակարդակի** միջանկյալ արդյունքների ապահովումն է՝ կոնկրետ ոլորտներում և բնագավառներում:

ՀՌԻՄԾ հիմնական ուղղություններն են.

19. ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտների և բնագավառների զարգացման քաղաքականության և դրանք կարգավորող **ՀՀ օրենսդրության կատարելագործում.**

- Կարգավորման քաղաքականության կանխատեսելիության **չափորոշիչների սահմանում՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան,** կարգավորման քաղաքականության անորոշության աստիճանի նվազեցում և **կարգավորման մեխանիզմների և ընթացակարգերի հետազա պարզեցում և հստակեցում:**
- Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում առկա կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը միտված **դրույթների ամրագրում:**
- Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի հետևողական կիրարկման և **համապատասխանության նկատմամբ վերահսկողության** մեխանիզմների ամրագրում:
- Օրենսդրությամբ սահմանված գործառույթների իրականացման թերացումների համար համարժեք **պատասխանատվության** միջոցների սահմանում:
- Օրենսդրության մեջ առկա **հակասությունների** և գործառույթների կրկնությունների բացահայտում և վերացում:
- Օրենսդրության համապատասխանեցում կոռուպցիայի դեմ պայքարին միտված միջազգային պայմանագրերի և հանձնառությունների պահանջներին:

20. Պետական մարմինների գործունեության **թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության** ապահովման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ընթացակարգերի կատարելագործում, պետական մարմինների միջև արդյունավետ հաղորդակցության և համագործակցության ապահովում

- Պետական և համայնքային ծառայողների **վարքագծի և շահերի բախման օրենսդրական կարգավորում՝** պետական ծառայողների համար եվրոպական միասնական վարքագծի կանոնների կիրառմամբ, մասնագիտական ծառայությունների համար վարքագծի կանոնակարգերի ընդունում:
- Պետական և համայնքային ծառայողների վարքագծի կանոնների, շահերի՝ այդ թվում պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման, պետական ծառայողների վարքագիծը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված այլ պարտավորությունների կատարման նկատմամբ ներքին և արտաքին **վերահսկողության սահմանում,** վերահսկողություն իրականացնող կառույցների կարողությունների զարգացում և դրանց միջև արդյունավետ **հաղորդակցության և համագործակցության** ընթացակարգերի սահմանում:
- Պետական և համայնքային ծառայողների վարքագիծը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների թերի կատարման համար համարժեք **պատասխանատվության սահմանում,** կիրառման նկատմամբ վերահսկողության իրականացում:
- Պետական մարմինների **գործառույթների տարանջատում,** դրանց **կառուցվածքի** բարելավում, պետական մարմինների աշխատակիցների մասնագիտական **չափորոշիչների սահմանում,** աշխատակազմի կարողությունների զարգացում, աշխատանքի **արդյունավետության գնահատման** համակարգերի ներդրում, պետական ծառայողների **վարձատրության** և սոցիալական ապահովության համակարգերի բարելավում:
- Պետական և համայնքային մարմինների և դրանց պաշտոնյաների գործունեության **թափանցիկությունն** ապահովող օրենսդրության կատարելագործում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, այդ թվում՝ պետական մարմինների գործունեության **թափանցիկության** չափորոշիչների և միասնական ընթացակարգերի և դրանց թերի կատարման համար համարժեք **պատասխանատվության սահմանում,** կիրառման նկատմամբ վերահսկողության ապահովում, համապատասխան տեխնիկական միջոցների և աշխատակազմի գիտելիքների և հմտությունների ապահովում:

- Պետական և համայնքային մարմինների և դրանց պաշտոնյաների գործունեության թափանցիկության օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ **վերահսկողության սահմանում**, վերահսկողություն իրականացնող կառույցների կարողությունների զարգացում:
- Պետական և համայնքային մարմինների և դրանց պաշտոնյաների գործունեության թափանցիկության ապահովումը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարման թերացումների համար:
- ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտներում և համակարգերում հանրային **ծառայությունների մատուցման որակի** չափորոշիչների սահմանում, դրանց համապատասխանեցում միջազգային չափանիշներին և լավագույն պրակտիկային այդ թվում՝ ընթացակարգերի, գործարքների և գործառնությունների ժամկետների, գործառնական ծախսերի, ծառայությունների որակի վերաբերյալ քաղաքացիների ընկալման և բավարարվածության աստիճանի գնահատում:
- ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտներում և բնագավառներում արագացված ընթացակարգերով ծառայությունների մատուցման կանոնակարգում, ծառայությունների մատուցման դիմաց պաշտոնական վճարների դրույքաչափերի նվազեցում, պետական մարմինների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ընթացակարգերում այլ պետական մարմիններից պահանջվող տեղեկատվությունը քաղաքացիների միջոցով ստանալու բացառում:
- ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտները և բնագավառները կարգավորող մարմինների գործունեության արդյունավետության գնահատում ու վերահսկողությունն իրականացնող կառույցների ու դրանց աշխատակիցների կարողությունների զարգացում, այդ մարմինների և կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված կառույցների միջև արդյունավետ հաղորդակցության և համագործակցության ընթացակարգերի սահմանում:

21. Կոռուպցիայի քրեականացում, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քրեական հետապնդում.

- ՀՀ օրենսդրության մեջ կոռուպցիոն հանցագործությունների **սահմանում** և դրանց բովանդակության համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:
- Համարժեք **պատիժների** սահմանում կոռուպցիոն հանցագործությունների համար, պասիվ և ակտիվ կոռուպցիոն հանցագործությունների համար պատիժների տարբերությունների վերացում:
- **Համարժեք վաղեմության** ժամկետների սահմանում:
- Կոռուպցիոն հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտների **բռնագրավման** և առգրավման մեխանիզմների ամբողջականացում և հստակեցում:
- **Իրավաբանական անձանց** քրեական պատասխանատվության սահմանում:
- **«Տեղեկություն տրամադրողների»** պաշտպանության մեխանիզմների սահմանում:

22. Քաղաքական կայունության, **քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների** ապահովման մակարդակի բարձրացում և ընտրական գործընթացների կատարելագործում.

- Ջանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ **ճնշումների** բացառման, օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության խստացում, ճնշումների կիրառման դեպքերի բացահայտում, խստացում և պատասխանատվության կիրառման նկատմամբ վերահսկողության ապահովում:
- Ջանգվածային լրատվության ոլորտը կարգավորող մարմինների մասնագիտական **անկախության և ինքնուրույնության** ապահովում, զանգվածային լրատվամիջոցների տնտեսական և մասնագիտական անկախության մակարդակի բարձրացում, լրատվամիջոցների հավտարմագրման և գործունեության ազատ միջավայրի ապահովման օրենսդրական պահանջների նկատմամբ վերահսկողության սահմանում:
- Տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության սահմանում, տեղեկատվության ազատության օրենսդրության և ընթացակարգերի խախտումների համար պատասխանատվության խստացում:

- Ընտրական գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերում տարընթերցումների վերացում, ընտրական վեճերի քննության գործընթացի թափանցիկությունն ապահովող ընթացակարգերի հանդեպ վերահսկողության խստացում:
- Ընտրողների գրանցման ընթացակարգերի շարունակական կատարելագործում և ընտրողների ռեգիստրում անճշտությունների բացահայտման գործընթացի նկատմամբ վերահսկողության խստացում:
- Նախընտրական միջավայրի արդյունավետ դիտարկումների ընթացակարգերի սահմանում և օրենսդրության պահանջների խախտումների համար պատասխանատվության խստացում, նախընտրական քարոզչության գործընթացում լրատվամիջոցների կողմից՝ անկախ նրանց սեփականության ձևից, հավասար պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության խստացում և խախտումների համար պատասխանատվության խստացում:
- Ընտրական գործընթացում վարչական ռեսուրսի օգտագործման նկատմամբ վերահսկողության սահմանում և քարոզչության հավասար պայմանների ու քաղաքացիների ազատ կանքի վրա ազդելու նպատակով վարչական ռեսուրսի կիրառման համար պատասխանատվության խստացում, ընտրական քարոզարշավի ֆինանսավորումը կանոնակարգող օրենսդրության և ընթացակարգերի կատարելագործում և դրանց պահանջների կատարման վերահսկողության խստացում:

23. Կոռուպցիայի հիմնախնդրի, տեսակների ու դրսևորումների, դրա հետևանքների ու վտանգավորության աստիճանի վերաբերյալ քաղաքացիների կրթություն.

- Կոռուպցիայի հիմնախնդիրը, տեսակներն ու դրսևորումները, կոռուպցիայի հետևանքներն ու վտանգավորության աստիճանը լուսաբանող և հասարակության մեջ կոռուպցիայի հանդեպ բացասական վերաբերմունքի արմատավորմանը և կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության ձևավորմանն ուղղված կանոնավոր տեղեկատվական ծրագրերի և քարոզարշավների կազմակերպում՝ քաղաքացիական հասարակության կառույցների լայն ներգրավմամբ:
- Կոռուպցիայի հիմնախնդրի և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ թեմատիկայի դասավանդում հանրակրթության և մասնագիտական կրթության մակարդակներում, ինչպես նաև քաղաքացիական կրթության ծրագրերում:
- Կոռուպցիայի դեմ պայքարի թեմատիկայի պարտադիր դասավանդում հանրային ծառայողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերի շրջանակներում:
- Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրների ուսումնասիրության և գիտական հետազոտությունների իրականացման պետական պատվերի ձևավորում:
- Իրավական տեղեկատվության կանոնավոր, հետևողական և շարունակական մատչելիության ապահովում, այդ թվում՝ հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով ծանուցման մեխանիզմով:

24. Կոռուցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցության ապահովում.

- Կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությանը քաղաքացիական հասարակության գործունե աջակցության ապահովում՝ ՀՌԻՄԾ և դրա իրականացման ընթացիկ արդյունքների վերաբերյալ հանրությանը և քաղաքացիական հասարակության կառույցներին կանոնավոր իրազեկման միջոցով:
- Քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտներում և համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի, իրականացվող միջոցառումների և դրանց արդյունքների մոնիտորինգի և գնահատման արդյունավետ մեխանիզմների սահմանում:
- Պետական և համայնքային մարմինների կողմից մատուցվող հանրային ծառայությունների, այդ թվում՝ պետական և համայնքային բյուջեների միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի, և այդ մարմինների պաշտոնյաների գործունեության նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության/մոնիտորինգի գործունե մեխանիզմների սահմանում:
- Քաղաքացիական հասարակության և պետական ու համայնքային մարմինների միջև ակտիվ երկխոսության մեխանիզմների և համագործակցության տարբեր մոդելների

ներդրում, այդ թվում՝ պետական և համայնքային մարմինների կողմից որոշ ծառայությունների մատուցման պատվիրակում քաղաքացիական հասարակության կառույցներին, որոշումների կայացմանը քաղաքացիական հասարակության ներգրավման առկա մասնակցային մեխանիզմների կիրառում:

- Ջանգվածային լրատվամիջոցներում հրապարակված կոռուպցիոն ռիսկերին և կոռուպցիայի դրսևորումներին վերաբերվող տեղեկատվությանն արդյունավետ արձագանքման մեխանիզմների ներդրում և դրանց կիրառման նկատմամբ վերահսկողության սահմանում:
- Պետական և համայնքային մարմինների և դրանց պաշտոնյաների գործունեության վերաբերյալ քաղաքացիների և քաղաքացիական հասարակության կառույցների դիմումներին, առաջարկներին և բողոքներին, տեղեկություն ստանալու հարցումներին, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներին, արդյունավետ արձագանքման մեխանիզմների ներդրում և դրանց կիրառման նկատմամբ վերահսկողության սահմանում:

25. Մասնավոր հատվածում կոռուպցիայի կրճատմանը նպաստող գործարար միջավայրի ձևավորում, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության խթանում.

- Աջակցություն գործարարների ինքնակարգավորման կառույցների կողմից ձեռնարկությունների կորպորատիվ կառավարման չափորոշիչների և գործարար էթիկայի միասնական կանոնների սահմանմանը՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան:
- Աջակցություն ձեռնարկությունների կորպորատիվ կառավարման չափորոշիչների կիրառմանը՝ գործարարների ինքնակարգավորման կառույցների կողմից ձեռնարկությունների կառավարման գնահատման համակարգի ներդրման և պետական գնումների համակարգում այդ գնահատման արդյունքների կիրառման միջոցով:
- Տնտեսական մրցակցության օրենսդրության դրույթները խախտող, հակամրցակցային վարքագիծ դրսևորող, շուկայում գերիշխող դիրքը կամ մենաշնորհը չարաշահող տնտեսավարողների նկատմամբ պատասխանատվության խստացում և համապատասխան դեպքերի լայն լուսաբանում:
- Սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիքների հետագա բարելավում և դրանց իրականացումն ապահովող պետական և համայնքային մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:
- Ձեռնարկատիրական գործունեության որոշ տեսակների համար լիցենզավորման պահանջի փոխարինում ապահովագրական մեխանիզմով: Մասնավորապես, տնտեսավարողների կողմից ծառայությունների մատուցման արդյունքում սպառողներին պատճառված վնասի հատուցումը երաշխավորելու նպատակով լիցենզավորման ենթակա ձեռնարկատիրական գործունեության որոշ տեսակների համար պարտադիր ապահովագրության համակարգերի ներդրում :

26. Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան.

- Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության **համակարգման** համար պատասխանատու մարմնի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:
- Կոռուպցիայի **կանխարգելման** մասնագիտացված մարմնի՝ Կոռուպցիայի կանխարգելման կենտրոնի ստեղծում և դրա ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:
- Կոռուպցիայի **բացահայտման** մասնագիտացված մարմինների, այդ թվում՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Ոստիկանության, ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ Դատախազության, և այլ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:
- Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված կառույցների, մարմինների համակարգված գործունեության ապահովում

- Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության , այդ թվում՝ միջազգային պայմանագրերով ստանձնած ՀՀ պարտավորությունների և հանձնառությունների իրականացման **մոնիտորինգի** և **արդյունքների գնահատման** համակարգի ձևավորում ու զարգացում:
- Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործող հեղինակավոր **միջազգային** կազմակերպությունների հետ:

27. Նշված ուղղություններով ՀՈՒՄԾ շրջանակներում նախանշված ոլորտներում և բնագավառներում իրականացվելու են կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված հստակ, շոշափելի և չափելի վերջնական ելքային արդյունքների ապահովմանը¹.

- **Ֆինանսական ծառայությունների ոլորտ.** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, վճարահաշվարկային, արժույթային, վարկային և ապահովագրական համակարգեր, արժեթղթերի շուկա:
- **Հարկային ոլորտ.** հարկային խարդախության և հարկերից խուսափողների դեմ պայքարի, հարկերի հավաքագրման և հարկային ստուգումների համակարգեր:
- **Մաքսային ոլորտ.** մաքսային ռեժիմի կիրառման, մաքսային ձևակերպումների և հայտարարագրման և մաքսային հսկողության համակարգեր
- **Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ.** բյուջետային, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, մեթոդի և արտաքին աուդիտի համակարգեր:
- **Հանրային գնումների ոլորտ.** գնումների գործընթացների կազմակերպման, հայտերի գնահատման և մրցույթի մասնակիցներ և դրանց գնահատման համակարգեր:
- **Կրթության և գիտության ոլորտ.** նախադպրոցական և արտադպրոցական կրթության, հանրակրթության, մասնագիտական կրթության և գիտության կառավարման համակարգեր:
- **Առողջապահության ոլորտ.** դեղերի և դեղամիջոցների շրջանառության և բժշկական տեխնոլոգիաների, առաջնային բուժօգնության, հիվանդանոցային բուժօգնության, պետական պատվերի և սանիտարա-համաճարակային հսկողության համակարգեր:
- **Աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտ.** սոցիալական աջակցության, կենսաթոշակային ապահովության, աշխատանքի պաշտպանության, զբաղվածության, բժկա-սոցիալական փորձաքննության, կանանց և երեխաների սոցիալական ապահովության և հաշմանդամների սոցիալական ապահովության համակարգեր:
- **Շրջակա միջավայրի պահպանության ոլորտ.** բնապահպանական փորձաքննության, ընդերքի օգտագործման և օգտակար հանածոների պաշարների կառավարման, ջրային ռեսուրսների կառավարման և բնական պաշարների կառավարման համակարգեր:
- **Գյուղատնտեսության ոլորտ.** հողօգտագործման, ագրոսպասարկման, անտառի օգտագործման, սննդի անվտանգության, բուսասանիտարիայի, երկրագործության և անասնաբուժության ծառայությունների համակարգեր:
- **Հաղորդակցության ոլորտ.** տրանսպորտի կառավարման, քաղաքացիական ավիացիայի կառավարման, կապի և հեռահաղորդակցության համակարգեր:
- **Քաղաքաշինության ոլորտ.** քաղաքաշինական նաժագծերի փորձաքննության և քաղաքաշինական աշխատանքների վերահսկողության համակարգեր:
- **Ներքին գործառնությունների ոլորտ.** ճգնաժամերի կառավարման, միգրացիայի և փախստականների հարցերի կառավարման, սեյսմիկ պաշտպանության, արխիվների կառավարման, գույքի նկատմամբ իրավունքի գրանցման, պետական գույքի կառավարման, լիցենզավորման և թույլտվությունների, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության, ստանդարտների և հավատարմագրման ծառայությունների համակարգեր:
- **Տեղական ինքնակառավարման ոլորտ.** համայնքի ֆինանսների կառավարման, տեղական ինքնակառավարման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություն, թույլտվությունների տրամադրման և այլ ծառայությունների մատուցման համակարգեր:

¹ Կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներն ու ուղղությունները ըստ ոլորտների և բնագավառների մանրամասն կշարադրվեն ռազմավարության 4-րդ գլխի ամփոփումից հետո:

- **Արդարադատության և իրավապահ ոլորտ.** դատական համակարգ, դատական ակտերի հարկադիր կատարման, դատական կարգադրիչների, քրեակատարողական, իրավաբանական անձանց պետական գրանցման, նոտարական ծառայության, դատախազական համակարգեր, քննչական հատուկ ծառայություն, ոստիկանության և ազգային անվտանգության համակարգեր:
- **Մշակույթի ոլորտ.** մշակութային արժեքների շրջանառության և պատմության և հուշարձանների պահպանության համակարգեր:
- **Կոմունալ կենցաղային ոլորտ.** սպառողների շահերի պաշտպանության և հանրային ծառայությունների կարգավորման համակարգեր:
- **Օրենսդիր իշխանություն.** օրենսդրական, վերահսկողության, կառավարության և իշխանության գործադիր մարմինների ձևավորման գործառույթներ:
- **Քաղաքական ոլորտ.** ընտրական համակարգ, քաղաքական կուսակցություններ և դրանց ֆինանսավորման համակարգ:
- **Մասնավոր հատված.** կորպորատիվ կառավարման, գործարարության ինքնակարգավորման և մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների համակարգեր:

2.4. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմին կամ մարմիններ

28. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն պետական քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման, կոռուպցիայի դեմ պայքարում ընդգրկված պետական մարմինների գործունեության համադրման, կոռուպցիայի պատճառների վերացման, դրա կանխարգելման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը կատարելագործելու նպատակով ՀՀ նախագահի 2004թ. հունիսի 1-ի հրամանագրով ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ)՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ: Խորհրդի կազմում ընդգրկված են ՀՀ ԱԺ նախագահի տեղակալը, ՀՀ վերահսկիչ պալատի նախագահը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ նախագահի օգնականը և վերահսկողական ծառայության ղեկավարը, ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահը, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահը:
29. Խորհրդի հիմնական գործառույթներն են՝
- համակարգել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի միջոցառումների իրականացման աշխատանքները և դիտարկումներ (մոնիտորինգ) իրականացնել դրանց նկատմամբ,
 - հաստատել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կազմը,
 - քննարկել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները,
 - համադրել համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը՝ կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացքում,
 - ձեռնարկել միջոցներ հակակոռուպցիոն ռազմավարությունից եւ միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող՝ ՀՀ ստանձնած այլ միջոցառումների իրականացման համար
 - ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը,
 - կազմակերպել եւ համակարգել Հայաստանի Հանրապետության գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման եւ իրականացման գործընթացը
 - իր աշխատանքների արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ զեկույց ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին:
30. Խորհրդի առջև դրված խնդիրների ու նպատակներին հասնելու համար, Խորհուրդն օժտված չի եղել հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականության մի շարք կարևոր գործառույթներով. կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների ընդլայնում և տարածում, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ներգրավում, կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ քաղաքացիների դիմումներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին արձագանքելը:
31. 2004-2007թթ. Խորհուրդը կազմակերպել է տասից ավելի նիստեր, միջին հաշվով եռամսյակը մեկ անգամ, հիմնականում քննարկել է հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված միջոցառումների կատարման ընթացքը, առանձին ոլորտներում և բնագավառներում կատարված աշխատանքները, մասնավորապես. ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության, ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի, ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի գործունեությանը, ինչպես նաև անդրադարձել քաղաքացիական ծառայության, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումներին վերաբերող ոլորտներին²: Քննարկումների արդյունքները, սակայն քաղաքականության կոմերտ միջոցառումների չեն վերածվել:
32. Խորհուրդն անդրադարձել է նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի առաջարկություններին, միջազգային կոմպենցիաներով և համաձայնագրերով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունների և

² http://www.gov.am/armversion/premier_2/primer_council_6hashvet.htm

հանձնառությունների կատարման ընթացքին, միջանկյալ զեկուլցներին ու գնահատականներին, որոնց ապահովման նպատակով սահմանվել են կոնկրետ հանձնարարականներ և կայացվել որոշումներ:

33. ՀՀ կառավարության պատվերով կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում կոռուպցիայի տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման վերաբերյալ ուսումնասիրություններ և հանրային հարցումներ չեն իրականացվել: Առանձին ոլորտներում և բնագավառներում կոնկրետ հակակոռուպցիոն ծրագրեր և կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ չեն մշակվել և չեն իրականացվել:
34. Խորհրդի կանոնակարգի համաձայն, ստեղծվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ՀՀ նախագահի օգնականի նախագահությամբ: Հանձնաժողովը կազմավորված է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի, ինչպես նաև նրանց կողմից առաջարկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Վերջինները ռոտացիոն կարգով փոփոխվում են տարեկան մեկ անգամ՝ Խորհրդի որոշմամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են նաև ՀՀ պետական կառավարման մի շարք մարմինների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահը և անդամները Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ:
35. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հիմնական գործառույթներն են.

- անցկացնել հակակոռուպցիոն ռազմավարության և գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ դիտարկումներ (մոնիտորինգ)՝ ներգրավելով հասարակայնության, զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին,
- ուսումնասիրել և ընդհանրացնել կոռուպցիայի դեմ պայքարի գործում միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական մարմինների փորձը և առաջարկություններ նախապատրաստել հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ,
- դիտարկումներ իրականացնել ՀՀ միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունների և հանձնառությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների (երաշխավորությունների) ներդրման և կատարման նկատմամբ,
- կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնել իրավական նորմատիվ ակտերի նախագծերի փորձաքննություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ:

36. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար իրավունք ունի՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով պահանջել և ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, վիճակագրական տվյալներ ու այլ փաստաթղթեր,
- Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, ստացված փաստաթղթերի հիման վրա կատարել դիտարկումներ և հետազոտություններ,
- կազմել աշխատանքային խմբեր կամ ենթախմբեր,
- առանձին հարցերի քննարկումները նախապատրաստելու համար իր աշխատանքներին ներգրավել փորձագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ,
- Հանձնաժողովի նիստերին հրավիրել զանգվածային լրատվության միջոցների, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատներ,
- կազմակերպել կոռուպցիայի դեմ պայքարի հարցերին նվիրված համաժողովներ, սեմինարներ, հեռուստահաղորդումներ, ինչպես նաև տարբեր բնույթի այլ քննարկումներ:

37. 2004-2007թթ. ընթացքում Հանձնաժողովը հրավիրել է ավելի քան տասներկու նիստեր, քննարկել և Խորհրդին առաջարկություններ է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի և դրա իրականացման միջոցառումների, ՀՀ միջազգային համաձայնագրերից, մասնավորապես

GRECO և OECD անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն ցանցի կազմակերպություններին անդամակցության երաշխավորություն-հանձնարարականների կատարման ընթացքի, դրանցից բխող պարտավորությունների եւ հանձնառությունների կատարման վերաբերյալ:

38. Հանձնաժողովը՝ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ, ձևավորել է տասներկու աշխատանքային խմբեր՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի բաժիններին համապատասխան և դրանց միջոցով կազմակերպել մոնիտորինգի աշխատանքները: Աշխատանքային խմբերի մի մասը միստեր չի գումարել: Մի շարք աշխատանքային խմբեր իրականացրել են օրենսդրական նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն, որը սակայն օրենսդրական փոփոխությունների չի հանգեցրել: Ընդհանուր առմամբ, աշխատանքային խմբերի գործունեությունը շարունակական չի եղել, ինչը հիմնականում պայմանավորված էր որակյալ կադրերով համալրված մասնագիտական անձնակազմի բացակայությամբ:
39. Հանձնաժողովը գործելով հասարակական հիմունքներով հնարավորություն չի ունեցել ձևավորելու լիարժեք կարողություններ մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Հանձնաժողովը կազմը և քաղաքացիական միավորումների ներկայացուցիչների ընդգրկման մեխանիզմները³ բավարար հիմքեր չեն ապահովել լիարժեք մասնակցային գործընթացի իրականացման համար: Ավելին, հասարակական կազմակերպությունների առաջադրման քաղաքականացված մեխանիզմը խոչընդոտում է Հանձնաժողովի գործունեությանը մասնագիտական ներուժի ներգրավմանը: Այսպես, հակակոռուպցիոն մասնագիտացված ԹԻ/ՏԶԿ կազմակերպությունը հրաժարվել է հանձնաժողովին անդամակցումից:
40. Խորհրդի և Հանձնաժողովի գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է ՀՀ Կառավարության աշխատակազմը, որը այդ գործառույթի իրականացման համար համապատասխան կառուցվածքային առանձնացված միավոր կամ մասնագետների խումբ չունի: Միջազգային կառույցների տեխնիկական օժանդակության շրջանակներում, անկախ փորձագետների կողմից նախապատրաստվել են հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման կատարողականի հաշվետվությունը, հաստատվել հանրապետությունում կոռուպցիոն քրեական դեպքերի վիճակագրության վարման մեթոդաբանությունը, մշակվել են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ առաջարկությունները:
41. Ընդհանուր առմամբ, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման, փոփոխությունների կառավարման, արդյունքների գնահատման գործընթացները լիարժեք կերպով իրականացնելու համար Խորհրդի ինստիտուցիոնալ կարողությունները, այդ թվում մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները, բավարար չեն: Միաժամանակ Հանձնաժողովը ֆինանսական միջոցների, ինչպես նաև մարդկային կարողությունների ու նյութական ռեսուրսների բացակայության պայմաններում հնարավորություն չի ունեցել ձևավորելու ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի ամբողջականացված համակարգ:
42. Այսպիսով, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հետագա արդյունավետ գործունեության շարունակականության ապահովման համար պահանջվում են համապատասխան մասնագիտացված մարմիններ⁴ պատշաճ ինստիտուցիոնալ կարողություններով, որոնք կապահովեն դրանց գործունեության արդյունավետությունը և մասնագիտական անկախությունը:
43. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունը իրականացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը: Համապատասխան գործառույթներ ունեն նաև ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային պետական ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն:
44. Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և հետաքննության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով դատարանում մեղադրանքի պաշտպանությունը իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազությունը: ՀՀ գլխավոր դատախազության գործառույթները հիմնականում ներառում են կոռուպցիայի վերաբերյալ փաստերով համապատասխան ուսումնասիրությունների, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի հարուցման, քրեական հետապնդման, դրանց նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրականացման, դատարաններում մեղադրանքի պաշտպանության, ինչպես նաև դատարանների օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների ու որոշումների դեմ բերված բողոքների պաշտպանությունը:

³ Հասարակական կազմակերպությունների ներգրավումը և մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին ռոտացիոն կարգով է և պայմանավորված է ԱԺ-ում ներկայացված խումբ, խմբակցությունների առաջադրմամբ:

⁴ Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների պահանջ սահմանված է նաև ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոմվենցիայիով, հանձնառություններ են սահմանված նաև OECD և GRECO -ի երաշխավորություններում:

45. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների առաջնային պաշտպանության գործառույթն իրականացնում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրված Մարդու իրավունքների պաշտպանը, որի անկախության բարձրագույն աստիճանը ամրագրվեց 2005թ. նոյեմբերին ընդունված ՀՀ սահմանադրության փոփոխությունների արդյունքում: Պաշպանը քննարկում է քաղաքացիների ներկայացրած համապատասխան բողոքները: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում Պաշտպանը կարող է տեղեկություններ պահանջել դատարաններից, սակայն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:
46. Բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին պետական վերահսկողությունն իրականացնում է 2007թ. հունվարին ստեղծված ՀՀ Վերահսկիչ պալատը, որը նույնպես սահմանադրական կառույց է: Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ներառյալ՝ դրանց աշխատակազմերը, դրանց ենթակա հիմնարկները, ինչպես նաև զնահատում է դրանց ներքին վերահսկողության համակարգը: Ընդ որում Վերահսկիչ պալատը իրավասու է իրականացնել հանդիպակաց ստուգումներ: Վերահսկիչ պալատը վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունները և ընթացիկ հաշվետվությունները վերահսկիչ պալատի խորհրդի որոշմամբ կարող է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, եթե դրանցում առկա են կասկածներ քրեաիրավական բնույթի, այդ թվում՝ կոռուպցիոն, խախտումների վերաբերյալ:
47. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում կասկածելի գործարքներն ուսումնասիրում, և դրանց սառեցման կամ կասեցման վերաբերյալ ՀՀ ԿԲ խորհրդին եզրակացություն է տրամադրում ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը:
48. Ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը, հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը, և տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է լայն լիազորություններով օժտված անկախ պետական մարմինը՝ ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը: Հանձնաժողովի հիմնական գործառույթները, մասնավորապես, ներառում են. տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի քննարկումը և որոշումների ընդունումը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները կանխող միջոցառումների մշակումը և իրականացումը:
49. Այսպիսով, Հայաստանում գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված կառավարման համակարգ, որտեղ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառույթները տարանջատված են կոռուպցիայի բացահայտման մասնագիտացված մարմիններից: Միաժամանակ, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության համակարգման, կոռուպցիայի կանխարգելման, օրենսդրության կատարելագործման, կոռուպցիայի վերաբերյալ վիճակագրության վարման, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ներգրավման և կրթալուսավորչական միջառք կարևորագույն գործառույթներ մնում են չիրականացված կամ էլ մասնակիրորեն իրականացված:
50. Կոռուպցիայի դեմ պայքարի (ԿԴՊ) մասնագիտացված մարմինների միջազգային փորձը⁵ առանձնացնում է կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնական մոդելներ. (ա) ԿԴՊ բազմանպատակային կառույցներ՝ իրավապահ մարմինների իրավասությամբ, (բ) ԿԴՊ ստորաբաժանումներ՝ իրավապահ մարմինների համակարգում, (գ) կոռուպցիայի կանխարգելման, քաղաքականության մշակման և համակարգման կառույցներ:
51. Իրավապահ մարմինների իրավասությամբ ԿԴՊ բազմանպատակային կառույցներ, մասնավորապես, գործում են Հոնգ-Կոնգում և Սինգապուրում, որոնց օրինակով ստեղծվել են նաև Լիտվայի և Լատվիայի համանման կառույցները: Դրանք ներառում են կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտ զրեթե բոլոր միջոցներն ու գործառույթները:
52. Իրավապահ մարմինների համակարգում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ստորաբաժանումները հիմնականում իրականացնում են օպերատիվ-հետախուզական և հետաքննչական գործառույթներ, որոշ դեպքերում՝ կոռուպցիայի կանխարգելման տարրերով: Այս մոդելը բնորոշ է եվրոպական որոշ երկրների. Իսպանիա, Բելգիա, Մեծ Բրիտանիա և այլն:

⁵ Specialised Anti-Corruption Institutions: Review of Models. Anti-corruption Network for Eastern Europe and Central Asia. OECD. 2008. <http://www.oecd.org>.

53. Կոռուպցիայի կանխարգելման, քաղաքականության մշակման և համակարգման կառույցներն իրականացնում են կոռուպցիայի կանխարգելման մեկ կամ մի քանի գործառնություններ, այդ թվում՝ կոռուպցիոն դեպքերի/ռիսկերի ուսումնասիրություններ, հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների մոնիտորինգ և համակարգում, պետական ծառայողների շահերի բախման, գույքի ու եկամուտների հայտարարագրում, էթիկայի և վարքագծի կանոնների մշակում և ներդրում, կրթական ծրագրերի իրականացում, միջազգային և քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն և այլն: Այս մոդելը կիրառվում է Ֆրանսիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Ալբանիայում, Մալթայում, Մակեդոնիայում և այլն:
54. Ընդհանուր առմամբ, հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականության համար կառավարման մոդելի ընտրության վրա ազդում են՝ երկրում կոռուպցիայի մակարդակը, գործող մարմինների ինքնուրույնությունը և դրանց անձնակազմերի մասնագիտական կարողությունները, գործող իրավական համակարգը, առկա ֆինանսական հնարավորություններն և այլն:
55. Ելելով այս չափորոշիչներից, և հաշվի առնելով Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորված կառույցներն ու կոռուպցիայի դեմ պայքարի գործող պրակտիկան, Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնող մարմինների զարգացումը 2008-2012թթ. միտված է լինելու դրանց հետագա ինստիտուցիոնալ զարգացմանը, գործունեության համակարգմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների համագործակցության ապահովմանը:
56. Հայաստանում հակակոռուպցիոն ամբողջական և արդյունավետ քաղաքականության սահմանումը և դրա արդյունքների գնահատումը, կոռուպցիայի դեմ պայքարում ընդգրկված պետական մարմինների գործունեության համակարգումը, կոռուպցիայի կանխարգելման պետական քաղաքականության կատարելագործումը իրականացնելու է ներկայումս գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը: Միաժամանակ ամբողջականացվելու են խորհրդի կազմն ու գործառնությունների շրջանակը: Մասնավորապես, խորհրդի կազմում առաջարկվում է ներգրավվել ներկայացուցիչ դատական համակարգից, Մարդու իրավունքների պաշտպանին և քաղաքացիական հասարակության ու գործարար աշխարհի ներկայացուցիչներ՝ ցանցային մեխանիզմով⁶:
57. Նոր ձևաչափով կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հիմնական գործառնություններն են լինելու.
- համակարգել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մշակման, իրականացման, դիտարկման և գնահատման աշխատանքները,
 - համակարգել և համադրել կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը,
 - կոռուպցիայի դեմ պայքարի գործում տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը,
 - համակարգել ՀՀ գերատեսչական (ոլորտային) հակակոռուպցիոն ծրագրերի մշակման եւ իրականացման գործընթացը,
 - կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնումն ու տարածումը:
58. **Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ քաղաքականության իրականացման, մոնիտորինգի, լիազորված մարմինների միջև համագործակցության, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի լիարժեք և արդյունավետ գործունեության ապահովման նպատակով առաջարկվում է ստեղծել կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանում, որի հիմնական գործառնություններն են լինելու.**
- հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը, ծրագրի մոնիտորինգն ու գնահատումը, կանոնավոր վերանայումը,
 - կոռուպցիայի մակարդակի, տեսակների և տարածվածության վերաբերյալ ուսումնասիրությունների և հարցումների կազմակերպումը,
 - պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվության ստացումը և վերլուծությունը, տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ուսումնասիրությունների իրականացումը,

⁶ Մասնավորապես, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են առաջադրվել Հանրային խորհրդի կողմից:

- առանձին պետական կառավարման մարմինների կողմից մշակված օրենսդրական նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացումը, կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստումը:
- կրթալուսավորչական միջոցառումների կազմակերպումը, հակակոռուպցիոն քարոզչության կազմակերպումը, կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հանրային իրազեկումը, այդ թվում՝ էլեկտրոնային կայքի վարման միջոցով
- կոռուպցիայի դեմ պայքարի պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի կազմակերպությունների աշխատակիցների համար վերապատրաստման թեմատիկ դասընթացների կազմակերպումը,
- կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների, հանձնառությունների վերաբերյալ զեկույցների, հաշվետվությունների, իրավական ակտերի նախագծերի մշակումը,
- հանրային ծառայողների վարքագծի միասնական կանոնների, շահերի հայտարարագրման և շահերի բախումների կարգավորման նոր ինստիտուտի մշակման ու ներդրման ապահովումը, օրենսդրական նախագծերի նախապատրաստումը, չափորոշիչների սահմանումը, պետական և համայնքային մարմիններին մեթոդական և խորհրդատվական աջակցությունը, օրենսդրության պահանջների նկատմամբ հսկողությունը և հրապարակայնության ապահովում
- պետական ծառայողների գույքի և եկամուտների հայտարարագրման նկատմամբ վերահսկողության իրականացում,
- քարտուղարական ծառայություններ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատանքներին:

59. Մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման կազմակերպչական կառուցվածքը և կարգավիճակը ուղղկիորեն կայանաավորվեն նրա հիմնական գործառնություններով: Միջնաժամկետ հեռանկարում՝ 2009-12թթ. առաջարկվում է ստեղծել «Կոռուպցիայի կանխարգելման կենտրոն» (այսուհետև՝ Կանխարգելման կենտրոն)՝ պետական կազմակերպություն, որը հեռանկարում՝ 2012թ.-ից հետո, կոռուպցիայի կանխարգելման բոլոր միջոցների համատեղմամբ, կարող է վերակազմավորվել ինքնուրույն պետական կառավարման մարմնի:
60. Կանխարգելման կենտրոնի պահպանման ծախսերն սկզբնական շրջանում առաջարկվում է իրականացնել ՀՀ կառավարության աշխատակազմի բյուջեի շրջանակներում: Կանխարգելման կենտրոնի աշխատակազմը կարող է սահմանափակվել 10-15 մասնագետներով: Լրացուցիչ մասնագիտական ներուժի անհրաժեշտության պարագայում, հնարավոր է իրականացնել ժամանակավոր գործուղումներ՝ այլ նախարարությունների աշխատակազմերից, կամ աշխատանքների մի մասը պայմանագրային հիմունքներով պատվիրել այլ մասնագետների:
61. Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մշակմանը և մոնիտորինգին քաղաքացիական հասարակության արդյունավետ և ընդգրկուն մասնակցությունն առաջարկվում է ապահովել ՀՀ Հանրային խորհրդի շրջանակներում: